Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին

եռամսյակային հաշվետվություն

(ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

2015թ. հունվար-մարտ ժամանակահատված

NORWEGIAN HELSINKI COMMITTEE

HELSINKI CITIZENS ASSEMBLY

Վանաձոր, 2015 թ.

Հաշվետվությունը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմեց՝ Անուշ Համբարյանը

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին եռամսյակային հաշվետվություն

(ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

2015թ. հունվար-մարտ ժամանակահատված

Նախաբան

Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել է 15 առցանց լրատվամիջոց[1]: Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները: Մարդու իրավունքի խախտման դեպքերն աղյուսակավորվել են ըստ ոստիկանության աշխատակիցների կատարած գործողությունների և դրանց վայրերի:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու խմբի՝ անհատական դեպքեր[2] և հավաքների ժամանակ տեղի ունեցած դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ բողոքի ցույց, երթ, բացօթյա ասուլիս, մոմավառություն և այլ:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի ամփոփ տվյալներ

ԶԼՄ-ների մշտադիտարկման ընթացքում հաշվետու ժամանակահատվածում՝ 2015թ. հունվար-մարտ ամիսներին, արձանագրվել է 56 դեպք, երբ ոստիկանության աշխատակիցների կողմից ոտնահարվել են քաղաքացիների իրավունքները:

Վերոնշյալ խախտումներից 12-ի դեպքում ոտնահարվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 1-ի դեպքում՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, 7-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, 1-ի դեպքում՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, 6-ի դեպքում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 2-ի դեպքում՝ լրագրողի՝ օրինական մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը, 4-ի

[1] Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ www.aravot.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.hetq.am, www.168.am, www.civilnet.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.zham.am, www.mamul.am, www.1in.am, www.investigatory.am:

[2] Խախտումների այդ խումբն առանձնացվել է որպես անհատական դեպքերի խումբ այն իմաստով, որ դեպքերը տեղի չեն ունեցել որևէ հանրային միջոցառման ժամանակ:

դեպքում՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը, 3-ի դեպքում՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը, 19-ի դեպքում՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, 1-ի դեպքում՝ կյանքի իրավունքը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման անհատական դեպքերի մասին ընդհանուր տվյալներ

2015թ. հունվար-մարտ ամիսներին արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման 18 անհատական դեպք, որոնցից 3-ի դեպքում խախտվել է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 1-ի դեպքում՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը (ներառյալ անձնական տվյալների, հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը), 3-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքը), 1-ի դեպքում՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, 3-ի դեպքում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 1-ի դեպքում՝ լրագրողի՝ օրինական մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը, 3-ի դեպքում՝ ֆիզիկական բռնություններից զերծ մնալու իրավունք, 3-ի դեպքում տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Անհատական դեպքերից 13-ը գրանցվել է Երևան քաղաքում, 3-ը՝ Արմավիրի մարզում, որոնցից 2-ը քաղաք Արմավիրում, 1-ը՝ քաղաք Մեծամորում, 1 դեպք արձանագրվել է Տավուշի մարզի Իջևան քաղաքում, իսկ 1 դեպքի վայրը նշված չի եղել:

Անհատական դեպքերից 10-ի դեպքում խախտվել է 1 հոգու իրավունք, 2-ի դեպքում՝ 5 հոգու, 1-ի դեպքում՝ 19 հոգու, իսկ մնացած 5-ի դեպքում հնարավոր չէ ստույգ որոշել, թե քանի հոգու իրավունք է ոտնահարվել:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված անհատական դեպքերի հակիրճ նկարագրություններ՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (կամ անգործության)

	Դեպքերի թիվ
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում	**3**
• բերման ենթարկում (քաղաքական հայացքների համար[3]) Դեպք 1. Փետրվարի 17-ին «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ) Աջափնյակ համայնքի կենտրոնական գրասենյակից ոստիկանություն են բերման ենթարկվել մոտ երկու տասնյակ ԲՀԿ անդամներ[4]: Դեպք 2. Փետրվարի 17-ին Արաբկիրի ոստիկանություն են բերման ենթարկվել ԲՀԿ-ի 5 ակտիվիստներ[5]:	2
• ձերբակալություն (քաղաքական հայացքների համար) Դեպք 1. Փետրվարի 16-ին ձերբակալվել է ԲՀԿ կուսակցության Նոր Նորքի գրասենյակի ղեկավար Արթուր Մամոյանը՝ ապօրինի զենք-զինամթերք պահելու կասկածանքով[6]:	1
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտում (ներառյալ անձնական տվյալների, հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը)	**1**
• անձնագրերի ոչ պատշաճ կերպով արխիվացում Դեպք 1. «Հայկական ժամանակ» թերթի՝ հունվարի 12-ի հաղորդմամբ ոստիկանության Կենտրոնական բաժնի նախկին շենքի սենյակներից մեկում,	1

3. ԲՀԿ-ի անդամների նկատմամբ ոստիկանության իրականացրած գործողությունները որակվել են որպես քաղական թելադրմամբ իրականացված գործողություններ այն պատճառով, որ անմիջապես հաջորդել են 2015թ. փետրվարի 12-ից հետո ԲՀԿ-ի նկատմամբ սկսված քաղաքական հետապնդմանը, թեև ոստիկանությունը դա հերքում է: ԶԼՄ-ներում բացի աղյուսակում նշված դեպքերից հրապարակումներ են եղել իրավապահ մարմինների նաև այլ գործողությունների մասին, որոնց դեպքում մամուլում տեղ գտած նյութերի հիման վրա որևէ կոնկրետ հիմնարար իրավունքի կամ ազատության խախտում դժվար է գրանցել, սակայն նրանք ակնհայտորեն ուղղված էին ԲՀԿ-ի նկատմամբ ճնշում գործադրելուն: Օր. փետրվարի 12-ից հետո «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի և նրան պատկանող տարածքների անվտանգությունն ապահովող Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության շուրջ 200 աշխատակից ազատվել է աշխատանքից, որը ոստիկանության կողմից մեկնաբանվել է որպես կադրային փոփոխություն, շուրջ 50-60 հատուկջոկատայիններ ստուգումներ են իրականացրել ԱԺ ԲՀԿ պատգամավոր Ռուբեն Գևորգյանի ընտանիքին պատկանող «Մագնում» հյուրանոցային համալիրում, Ռուբեն Գևորգյանը top-news.am-ին տեղեկացրել էր, որ Երևանի քննչական վարչության աշխատակիցները հյուրանոցի այցելուներին փակել էին համարներում և հարցաքննում էին, իսկ ոստիկանությունից հայտնել են, որ հյուրանոցային համալիրից բաժին են հրավիրվել հյուրանոցային համալիր պոռնկությամբ զբաղվելու համար այցելած մարմնավաճառների:

4. Բերման են ենթարկվել ԲՀԿ-ի մոտ երկու տասնյակ անդամներ, http://www.azatutyun.am/archive/news/20150217/2031/2031.html?id=26854786

5. «ԲՀԿ-ակտիվիստներին ազատ են արձակել». Էլինար Վարդանյան, http://www.aravot.am/2015/02/17/543262/

6. ԲՀԿ Նոր Նորքի գրասենյակի ղեկավարը ձերբակալվել է, http://www.azatutyun.am/archive/news/20150217/2031/2031.html?id=26853545

որի լուսամուտները ջարդված են և նայում են դեպի բակ, արխիվային տասնյակ անձնագրեր են լցված եղել գետնին՝ բաց վիճակում: Թերթի հավաստմամբ անզեն աչքով հնարավոր էր կարդալ քաղաքացիների անձնական տվյալները[7]:	
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքի խախտումը)	**3**
• հայհոյանք խոստովանություն կորզելու նպատակով Դեպք 1. Փետրվարի 21-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում հատուկ ծառայություն իրականացնող անձինք հայհոյել են քաղաքացուն, ինչպես նաև բռնության են ենթարկել, ինչը արդյունքում նա խոստովանել է իր կողմից չկատարված գողության հանգամանքը[8]:	1
• քաղաքացու հետ ոչ պատշաճ տոնով հաղորդակցություն Դեպք 1. 20-23 տարեկան երիտասարդը, ոստիկանների կողմից ընկերոջը ոստիկանական մեքենա նստեցնելուց հետո «արա»-ով է դիմում ոստիկանին, ինչին վերջինս պատասխանում է.«Էդ ու՞մ ես ասում արա՛, արի ստե հլը, քեզ շատ երես տվին ոնց որ, ա՛յ տղա»[9]: Դեպք 2. Վեդիի բնակիչ Անի Հարությունյանի խոսքերով՝ ինքը երեխաների հետ միասին փետրվար ամսին նախագահական նստավայրի մոտ նստացույց էր սկսել, սակայն Երևանի ոստիկանները դիմել են Վեդիի ոստիկանություն, որպեսզի վերջինիս ներկայացուցիչներն իրենց համոզեին դադարեցնել նստացույցը: Վեդիի ոստիկանները խոստացել են օգնել, սակայն, երբ Անին ավելի ուշ դիմել է նրանց,պատասխանել են. «արդեն զզվցրիք»:	2
Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտում	**1**
• առանց փաստաթուղթ ներկայացնելու բնակարանի խուզարկություն (քաղաքական հայացքների համար) Դեպք 1. Փետրվարի 16-ին ԲՀԿ-ական պատգամավոր Ռուստամ Գասպարյանի տունը շրջապատել են մոտ չորս տասնյակ քաղաքացիական հագուստով ոստիկաններ: Նրանք պահանջել են Գասպարյանի որդուն, ապա խուզարկել են տունը՝ առանց համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու[10]:	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտում	**3**
• անգործություն (հանցագործության չբացահայտում) Դեպք 1. Քաղաքացիական ակտիվիստ Վիլեն Գաբրիելյանին հունվարի 17-ին	3

[7] ՀՀ անձնագրերը թափված են ոստիկանության լքված շենքի հատակին, http://www.haynews.am/hy/1423723008

[8] Կիրառված բռնությունների արդյունքում անձը խոստովանել է չկատարված հանցագործությունը, http://www.investigatory.am/am/News/item/1560/

[9] Ահա թե որքան «հզոր» ու «անաչառ» է մեր ոստիկանությունը, http://www.hraparak.am/?p=74515&l=am/aha+tevorqan+hzorvo%D6%82+anachar+e+mervostikanutyuny

[10] Ռուստամ Գասպարյանի տունը շրջապատել են, http://hraparak.am/?p=73217&l=am%2Frustam%20gasparyani%20tuny%20shrjapatel%20en

անհայտ անձինք ծեծի ենթարկեցին, որից հետո ակտիվիստը հայտարարել էր, որ կասկածում է, թե ծեծի հեղինակը ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանն է: Նա նաև հայտարարել է, որ ոստիկանությունը գործի բացահայտման առումով անգործություն է ցուցաբերում: Հարուցվել է քրեական գործ, որը կասեցվել է, մեղավորները չեն հայտնաբերվել[11]: • անգործություն (ապօրինության մասին միջնորդություն ստանալուց հետո համապատասխան քայլերի չձեռնարկում) Դեպք 2. Վաղարշ Աբրահամյանին պատկանող ոսկու շուկային հարակից փակուղու տարածքը հսկում են երկու կարգավարներ և ապօրինի կերպով գումար են վերցնում իրենց մեքենաները կայանող քաղաքացիներից: Քաղաքապետարանը միջնորդություն է ներկայացրել ոստիկանություն, սակայն վերջինիս կողմից անգործություն է ցուցաբերվել: Միջնորդություն ներկայացնելու մասին տեղեկատվությունը «Հետք»-ին տրամադրվել է փետրվարի 18-ին, իսկ ոստիկանության անգործության վերաբերյալ նյութը հրապարակվել է մարտի 16-ին:[12] • անգործություն (հանցագործության մասին հաղորդում ստանալուց հետո արդյունավետ գործողությունների չձեռնարկում) Դեպք 3. Մարտի 13-ին անհայտ անձինք «Իրավունքի Եվրոպա միավորում» (ԻԵՄ) հասարակական կազմակերպության գրասենյակից գողացել են երկու նոթբուք համակարգիչ: Կազմակերպությունը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, սակայն ԻԵՄ-ի գրասենյակ ժամանած ոստիկանները գործել են ոչ արդյունավետ. մատնահետքերը վերցվել են միայն կազմակերպության անդամների կողմից պահանջ ներկայացնելուց հետո, իսկ շրջակայքում տեղակայված տեսախցիկների տեսագրությունները հանցագործության կատարումից հետո տասներորդ օրվա դրությամբ ոստիկանության կողմից ձեռք չեն բերվել[13]:	
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**1**
• լրագրողին լուսանկարել թույլ չտալը Դեպք 1. Փետրվարի 17-ի Հովիկ Աբրահամյանի առանձնատան տարածքը հսկող ոստիկանները լրագրողին թույլ չեն տվել նկարել Սերժ Սարգսյանի՝ առանձնատան ընդարձակ բակում գտնվող կորտեժը: Վերջինս գնացել էր Հովիկ Աբրահամյանի հետ հանդիպման[14]:	1
Ֆիզիկական բռնություններից զերծ մնալու իրավունքի խախտում	**3**

[11] Գործը կասեցվել է, բայց ծեծի ետևում Վովա ձաձյան է կանգնած, http://hraparak.am/?p=75224&l=am/gorcy+kasecvel+e+bayc+ceci+etevum+vova+dzadzyan+e+kangnac

12.Ոսկու շուկայի տիրոջ ապօրինի ձեռնարկատիրությունն ու ոստիկանության անգործությունը, http://hetq.am/arm/news/59076/osku-shukayi-tiroj-aporini-dzernarkatirutyunn-u-ostikanutyan-angortsutyuny-tesanyut.html/

[13] ԻԵՄ-ը դատապարտում է ՀՀ ոստիկանության անգործությունը, http://www.aravot.am/2015/03/23/553598/

[14] Մինչեւ ուշ գիշեր Սարգսյան-Ծառուկյան բանակցությունները շարունակվել են, http://www.armtimes.com/hy/read/59842

• բերման ենթարկելիս բռնության գործադրում Դեպք 1. Հունվարի 31-ին իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ մեղադրվող քաղաքացին հայտնել է, որ հիշյալ օրը իր ինքնազգացողությունը վատացել է, չի ցանկացել գնալ ոստիկանության բաժին, սակայն ոստիկանության աշխատակիցները ձեռնաշղթաներով ստիպողաբար բերման ենթարկելիս իր նկատմամբ գործադրել են բռնություն՝ քաշքշել են և հարվածել[15]:	1
• բռնության կիրառում խոստովանություն կորզելու նպատակով Դեպք 1. Փետրվարի 21-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում հատուկ ծառայություն իրականացնող անձինք բռնություն են գործադրել քաղաքացու նկատմամբ. ոտքերով և ձեռքերով հարվածներ են հասցրել մարմնի տարբեր մասերին, ինչի հետևանքով ստացել է մարմնական վնասվածքներ: Բռնություններից հետո նա խոստովանել է իր կողմից չկատարված գողության հանգամանքը[16]:	1
• քաղաքացու նկատմամբ բռնության կիրառում իր պահանջը չկատարելու պատճառով Դեպք 1. Մարտի 10-ին ոստիկանության աշխատակիցը փողոցում կանգնելու համար դիտողություն է արել քաղաքացուն և պահանջել է հեռանալ: Մերժում ստանալով՝ ոստիկանության աշխատակիցը բռնություն է կիրառել քաղաքացու նկատմամբ՝ բռնելով մազերից գլուխը հարվածել է հարակից կրպակի դռանը, որից հետո բռունցքով հարվածներ է հասցրել գլխին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ[17]:	1
Տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտում	**3**
• գրությունները չընդունելը և գրություններին պատշաճ կերպով չպատասխանելը Դեպք 1. Իջևանի քաղաքապետ Վարդան Ղալումյանը փետրվարի 12-ին հարցմամբ դիմել է ոստիկանության Իջևանի բաժին, սակայն այնտեղ հրաժարվել են քաղաքապետարանի աշխատակցից վերցնել դիմումը, ասելով, որ բաժնում դիմում վերցնող աշխատակիցը աշխատանքից ազատվել է: Այնուհետև Իջևանի քաղաքապետարանի աշխատակիցը գնացել է ոստիկանության Տավուշի մարզային վարչություն, սակայն այնտեղ նույնպես չեն	1

[15] Ոստիկանություն բերման ենթարկելիս կիրառվել է բռնություն, http://www.investigatory.am/am/News/item/1539/

[16] Տե՛ս 6-րդ կետը

17. Պաշտոնատար անձը բռնություն է կիրառել քաղաքացու նկատմամբ և պատճառել մարմնական վնասվածքներ, http://www.investigatory.am/am/News/item/1597/

ընդունել հարցում-գրությունը՝ առաջարկելով այն հանձնել ոստիկանության Իջևանի բաժին[18]:	
• քաղաքացիներին ՀՀ նախագահական նստավայր մուտք գործել թույլ չտալը Դեպք 1. Մարտի 5-ին Նախագահական նստավայրի մոտ ոստիկանության աշխատակիցները պատնեշ էին կազմել և բանակում զոհված զինվորների ծնողներին թույլ չէին տալիս գնալ նամակների բաժին իրենց ուղարկած նամակի պատասխանը կամ նրա մասին տեղեկատվություն ստանալու նպատակով[19]: Դեպք 2. Ոստիկանները բանակում զոհված զինծառայողների ծնողներին մարտի 12-ին թույլ չեն տվել տեղեկատվություն ստանալու նպատակով մտնել նախագական նստավայր և միայն Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակի ներկայացուցչի ժամանալուց հետո է դա նրանց հաջողվել[20]:	2
Ընդամենը	**18**

Հաշվետու ժամանակահատվածում մշտադիտարկման ընթացքում դիտարկվել են նաև 6 անհատական դեպքեր, որոնց տեղի ունենալու ամսաթիվը ԶԼՄ-ների տրամադրած տեղեկատվության հիման վրա հնարավոր չէր որոշել: Այդ դեպքերից 2-ի դեպքում խախտվել էր քաղաքացիների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 2-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքը), 1-ի դեպքում՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը, 1-ի դեպքում՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը: Դեպքերից 3-ը տեղի են ունեցել Երևան քաղաքում, 1-ը՝ Լոռու մարզում, 1-ը՝ Արարատի մարզում, 1-ի վայրը որոշել հնարավոր չէր:

Հավաքների ժամանակ ոստիկանության կողմից մարդու իրավունքի խախտման դեպքերի ընդհանուր տվյալներ

Հավաքների ժամանակ հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել մարդու իրավունքների խախտման 38 դեպք, որոնցից 19-ի դեպքում խախտվել է խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, 9-ի դեպքում՝ անձնական

18. http://www.aravot.am/2015/02/12/541711/, Իջեւանի քաղաքապետ. «Ոստիկանությունը մեր դիմումները չի մուտքագրում»

[19]Ոստիկանական պատնեշ նախագահականի մոտ՝ միայն զոհվածների մայրերի համար, http://www.epress.am/2015/03/05/263142.html?utm_source=feedburner&utm_medium=feed&utm_campaign=Feed%3A+EpressNewsAM+%28Epress.am+%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%29

[20] Բանակում զոհված զինծառայողների ծնողները՝ Բաղրամյան 26-ի մոտ, http://zham.am/am/news/44849.html

ազատության և անձեռնմխելիության իրավունքը, 4-ի դեպքում՝ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքը), 3-ի դեպքում՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, 1-ի դեպքում՝ լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքը, 1-ի դեպքում՝ ֆիզիկական բռնություններից զերծ մնալու իրավունք, 1-ի դեպքում՝ կյանքի իրավունքը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը:

Հավաքների ժամանակ տեղի ունեցած դեպքերից 23-ը գրանցվել են քաղաք Երևանում, 14-ը՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, 1-ի դեպքում ոստիկանությունն անգործության է դրսևորել ԼՂՀ-ի Բերձոր քաղաքի մոտ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ:

Հավաքների ժամանակ գրանցված դեպքերից 10-ի դեպքում խախտվել է 1 քաղաքացու իրավունք, 4-ի դեպքում՝ 2, 1-ի դեպքում՝3, 1-ի դեպքում՝ 4, 1-ի դեպքում՝ 21, 1-ի դեպքում՝ 38, 2-ի դեպքում մոտ 1000, 1-ի դեպքում՝ մոտ 25, մյուսների դեպքում հնարավոր չէ ստույգ որոշել, թե քանի հոգու իրավունք է խախտվել:

Հաշվետու ժամանակահատվածում հավաքների ժամանակ գրանցված դեպքերի հակիրճ նկարագրություններ՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (կամ անգործության)

	Դեպքերի թիվ
Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտում	**19**
• հավաքի խոչընդոտում Դեպք 1. Ավետիսյանների ընտանիքի սպանության հետ կապված հունվարի 14-ին Գյումրիում բողոքի ավտոերթ է մեկնարկել: Մասնակիցներից մեկի՝ Վարդան Հակոբյանի հաղորդմամբ ոստիկանությունը փորձել է խոչընդոտել մեքենաների տեղաշարժը[21]: Դեպք 2. Հունվարի 14-ին Գյումրիում տեղի ունեցած ավտոերթի ժամանակ մի երիտասարդ մարզպետարանի շենքի լուսամուտին փակցրեց «Ես էլ եմ Ավետիսյան» գրությամբ թուղթ. ոստիկանները հարձակվեցին քաղաքացու վրա ու հեռացրեցին նրան պատուհանի մոտից[22]: Դեպք 3. Հուվարի 14-ին Գյումրիում իրականացվող երթի մասնակիցները Ռուսաստանի Հյուպատոսարանի դիմաց կանգնեցրին մեքենաները՝ փակելով փողոցը: Քաղաքացիները, իջնելով մեքենաներից, սկսեցին հայհոյանքներ տեղալ ՀՀ իշխանությունների ու մարդասպանությունը կատարած Պերմյակովի հասցեին: Իսկ որոշ քաղաքացիների կողմից ձվեր շպրտելուց հետո ոստիկանների հետ տեղի ունեցավ քաշքշուկ. ոստիկանները փորձեցին քաղաքացիներին հեռացնել փողոցից, ինչը չստացվեց[23]: Դեպք 4. Ավետիսյանների ընտանիքի սպանությունից հետո՝ Հունվարի 14-ին ՀՀ նախագահի նստավայրի առաջ մի քանի տասնյակ քաղաքացիական ակտիվիստներ, քաղաքացիներ ակցիա են անցկացրել՝ «ա-մոթ», «պուտինկաներ» վանկարկումներով: Ոստիկանները՝ պատ կազմած, ակտիվիստներին թույլ չեն տվել տեղաշարժվել դեպի նախագահականի մայթ[24] [25]:	19

[21] Ոստիկանները խոչընդոտում են Գյումրիի ավտոերթը, http://www.hraparak.am/?p=71015&l=am/ostikanery+xochyndotum+en+gyumrii+avtoerty

[22] Գյումրեցիները գրոհեցին ռուսական ռազմաբազան, http://www.armtimes.com/hy/read/58249

[23] Տե՛ս 18-րդ կետը

[24] «Ամոթ», «պուտինկաներ»՝ քաղաքացիական ակտիվիստները նման վանկարկումներով նախագահի նստավարի մոտ ակցիա են անում, http://www.aravot.am/2015/01/14/532186/

[25] Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված է, որ ոստիկանությունը պարտավոր է ապահովել հավաքի անցկացման վայրում գտվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը: Սակայն քաղաքացիների համար հաճախ հստակ չի լինում, թե կոնկրետ ինչ կարգով է դա իրականացվում, քանի որ հավաքների ժամանակ իրենց այդ պարտականությունը կատարելիս ոստիկանությունը քաղաքացիներին իրավական հիմք չի ներկայացնում այն մասին, թե օր. ինչու չի կարելի երթ անցկացնել ԱԱԾ-ի դիմացի մայթով, առանց շենքի մուտքը փակելու հավաք անցկացնել ՀՀ նախագահական նստավայրի մոտ և այլն:

Դեպք 5. Հունվարի 14-ին Հայաստանի նախագահի նստավայրի առջև տեղի ունեցած ցույցի ժամանակ ոստիկանները՝ պատ կազմած, ցուցարարներին թույլ չեն տվել անցնել մայթը բողոքի ակցիան շարունակելու համար: Ցուցարարները պահանջում էին անհապաղ միջոցներ ձեռնարկել Գյումրիի ոճրագործության մեջ կասկածվող ռուս զինվորականին Հայաստանի իրավապահներին փոխանցելու ուղղությամբ[26]: Դեպք 6. Հունվարի 14-ին Գյումրիում տեղի ունեցած ցույցի ժամանակ ոստիկանները պատ էին կազմել ռուսական 102-րդ ռազմաբազայի մոտ՝ ցուցարարներին կանգնեցնելու նպատակով[27]: Դեպք 7. Հունվարի 15-ին Երևանում Ռուսաստանի դեսպանատան դիմաց բողոքի ակցիայի ժամանակ ոստիկաններն օդակի մեջ էին առել ցույցի մասնակիցներին՝ թույլ չտալով մոտենալ դեսպանատան շենքին[28]: Դեպք 8. Հունվարի 15-ին Երևանում Ռուսաստանի դեսպանատան դիմաց բողոքի ակցիայի ժամանակ ոստիկանական ճնշումները ակտիվիտների նկատմամբ սրվեցին, երբ դեպքի վայր ժամանեցին կարմիրբերետավորները: Ակտիվիտներից ոմանց հենց մայթից հրում էին դեպի փողոցի երթևեկելի մասը[29]: Դեպք 9. Հունվարի 15-ին ՀՀ գլխավոր դատախազության մոտ տեղի ունեցած ցույցի ժամանակ ոստիկանները պատ էին կազմել՝ ցուցարարներին թույլ չտալով անցնել դատախազության դիմացի մայթը[30]: Դեպք 10. Հունվարի 15-ին Գյումրիում ոստիկանները Ռուսաստանի Դաշնության հյուպատոսությունից 200 մետր հեռավորության վրա շղթա էին կազմել՝ խոչընդոտելով երթի՝ այդ պահին դեռևս խաղաղ ընթացքը[31]: Դեպք 11. Հունվարի 19-ին ոստիկանները քաղաքացիներին թույլ չեն տալիս Օպերայի աստիճաններին վառվող մոմեր տեղադրել՝ պատճառաբանելով, որ քաղաքացիները խախտում են օրենքը: Քաղաքացիները ցանկանում էին մոմավառություն անցկացնել Գյումրիում սպանված ընտանիքի ամենակրտսեր անդամի՝ Սերյոժայի համար[32]:	

[26] Բազմամարդ բողոքի ցույց նախագահի նստավայրի դիմաց, http://www.azatutyun.am/archive/news/20150112/2031/2031.html?id=26793785

[27] Գյումրեցիները գրոհեցին ռուսական ռազմաբազան, http://www.armtimes.com/hy/read/58249

[28] ՌԴ դեսպանատան մոտ բողոքի ցույցի երեք մասնակիցներ բերման ենթարկվեցին, http://www.azatutyun.am/content/article/26795699.html

[29] ՌԴ դեսպանատան մոտ բողոքի ցույցի երեք մասնակիցներ բերման ենթարկվեցին, http://www.azatutyun.am/content/article/26795699.html

[30] ՀՀ գլխավոր դատախազության մոտից բերման են ենթարկել Արգիշտի Կիվիրյանին, http://news.am/arm/news/247925.html

[31] Ոստիկանությունն արեց ամեն ինչ, որ ոստիկաններ վիրավորվեն, http://www.aravot.am/2015/01/16/532784/

[32] Ոստիկանները թույլ չեն տալիս Օպերայի աստիճաններին Սերյոժայի համար մոմեր վառել, http://news.am/arm/news/248539.html

Դեպք 12. Հունվարի 20-ին «Էյչ-Էս-Բի-Սի» բանկի նախկին աշխատակից Աշոտ Առուշանյանի ընտանիքը հացադուլ էր իրականացնում ՀՀ նախագահի նստավայրի դիմաց: Ոստիկանները հացադուլավորներին թույլ չեն տվել պաստառները փակցնել տեսանելի վայրում՝ մայթեզրի բազրիքին՝ այն պատճառաբանությամբ, որ դա հասարակական տարածքի ոչ նպատակային օգտագործում է[33]: Դեպք 13. Հունվարի 27-ին փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչները կառավարության շենքի առաջ պահանջում էին վարչապետի հետ հանդիպում: Բողոքի ակցիայի ժամանակ մեծ թվով ոստիկաններ պատ կազմած չէին թողնում որևէ մեկը մոտենար կառավարության շենքին[34]: Դեպք 14. Հունվարի 29-ին, «Շրջանառության հարկի մասին» օրենքի դեմ պայքարող ձեռներեցները կառավարությունից հասան նախագահական նստավայր, ոստիկանները շրջափակման մեջ առան նրանց՝ ցույցի մասնակիցներին թույլ չտալով անցնել նախագահականի մայթ[35]: Դեպք 15. Բերձորում ջարդված մեքենաների տերերը փետրվարի 5-ին նախատեսել էին բացօթյա ասուլիս իրականացնել Հանրապետության հրապարակում՝ ցուցադրելով իրենց մեքենաները: Սակայն ոստիկանությունը, հայտարարելով, որ ինչ-որ պատվիրակություն է գալիս, նրանց զբաղեցրած տարածքից դուրս մղեց՝ երկու մեքենա տեղափոխելով տուգանային հրապարակ[36]: Դեպք 16. Փետրվարի 9-ին Կառավարության շենքի մոտից դեպի ոստիկանության շենք շարժվող ցուցարարներին ԱԱԾ շենքի մոտ դիմավորել է Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը և պահանջել է, որ երթի մասնակիցները քայլեն ԱԱԾ-ի դիմացի մայթով[37]: Դեպք 17. Փետրվարի 11-ին ոստիկանները ՀՀ նախագահի նստավայրի դիմաց բողոքի ակցիա անցկացնող բանակում խաղաղ պայմաններում զոհված զինվորների ծնողներից մեկին՝ Գոհար Սարգսյանին, բռնել են ոտքերից ու ձեռքերից և, քարշ տալով, տեղափոխել են դիմացի մայթ: Ոստիկանները ակցիայի մեկ այլ մասնակցի նույնպես փորձում էին ուժով տեղափոխել նախագահականի դիմացի մայթ[38]:	

[33] Ընտանեկան հացադուլ նախագահականի դիմաց, http://civilnet.am/2015/01/20/ashot-arushanyan-family-hunger-strike/#.VPVgl_msUe0

[34] Հազարավոր առեւտրականներ կառավարությունից պահանջում են օրենքը կասեցնել, http://www.aravot.am/2015/01/27/536146/

[35] Բողոքի ակցիա անցկացնող ձեռներեցներին որևէ պաշտոնյա չընդունեց, http://www.azatutyun.am/content/article/26820242.html

[36] Բերձորում ջարդված մեքենաներին տեղ չկա նաև Երևանում, http://civilnet.am/2015/02/05/berdzor-yerevan-cars-police-protest/#.VNS-XJ2sUe1

[37] Ցուցարարների եւ ոստիկանների բախումը կանխվեց, http://www.aravot.am/2015/02/09/540332/

[38] Ոստիկանները բռնություն կիրառեցին զոհված զինվորների ծնողների նկատմամբ, http://www.epress.am/2015/02/11/262449.html

Դեպք 18. Փետրվարի 19-ին բանակում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողներին թույլ չեն տվել բողոքի ակցիա անցկացնել ՀՀ նախագահի նստավայրի դարպասների դիմաց[39]: Դեպք 19. Փետրվարի 27-ին ակտիվիստ Վարդգես Գասպարին ակցիա իրականացնելու նպատակով փորձել է կանգնել ՀՀ Գլխավոր դատախազության շենքի մոտ, սակայն ոստիկանները նրան թույլ չեն տվել և ձեռքերից ու ոտքերից բռնելով՝ տեղափոխել են դիմացի մայթ, որտեղ նա պառկել է գետնին՝ «Գյումրիի ողբերգությունը միայն Ավետիսյանների և գյումրեցիների խնդիրը չէ» գրությամբ պաստառը ձեռքին[40]:	
Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում	**9**
• բերման ենթարկում[41] Դեպք 1. Հունվարի 15-ին Ազատության հրապարակում ոստիկանները բերման են ենթարկել ի զորակցություն Գյումրիում ցույցի մասնակիցների հավաքված անձանց: Հրապարակ եկած փոխգնդապետ Կարեն Մովսիսյանը հայտարարել է, թե օպերատիվ տեղեկություններ ունեն, որ հավաքվածների մոտ զենք կա և նրանք ուզում են անկարգություններ անել: Բերման է ենթարկվել 38 հոգի[42]: Դեպք 2. Հունվարի 15-ին ՀՀ գլխավոր դատախազության մոտ հավաքված ակցիայի մասնակիցներից Արգիշտի Կիվիրյանը և մեկ այլ ակտիվիստ բերման ենթարկվեցին[43]: Դեպք 3.Հունվարի 15-ին ՌԴ դեսպանատան մոտ մի խումբ քաղաքացիներ բողոքի ակցիա են իրականացրել, որի ժամանակ բերման են ենթարկել ոստիկանական պատը ճեղքելու փորձ կատարած Տիգրան Խզմալյանին և Արծրուն Նշանյանին[44]:	6

[39] «Վաղը էդ կադրերով ձեզ դատելու են». պատգամավորը՝ ոստիկանին, http://www.epress.am/2015/02/19/262671.html?utm_source=feedburner&utm_medium=feed&utm_campaign=Feed%3A+EpressNewsAM+%28Epress.am+%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%29

[40] Վարդգես Գասպարին պառկեց դատախազության շենքի մոտ. ակցիա Ավետիսյանների գործով, http://news.am/arm/news/254679.html

[41] Բերման ենթարկելիս ոստիկանները հաճախ թույլ են տվել այնպիսի խախտումներ, ինչպիսիք են չներկայանալը, բերման ենթարկելու հիմքերը չներկայացնելը և այլն:

[42] Ազատության հրապարակից բերման են ենթարկում տասնյակ մարդկանց, http://news.am/arm/news/247994.html

[43] ՀՀ գլխավոր դատախազության մոտից բերման են ենթարկել Արգիշտի Կիվիրյանին, http://news.am/arm/news/247925.html

[44] Բերման են ենթարկել Տիգրան Խզմալյանին, http://www.a1plus.am/1359740.html

Դեպք 4. Հունվարի 15-ին Գյումրիում ռուսական 102-րդ ռազմաբազայի մոտ տեղի ունեցած ցույցի ժամանակ գրանցված միջադեպի արդյունքում բերման է ենթարկվել 21 քաղաքացի[45]:[46] Դեպք 5. Փետրվարի 4-ին Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղի բնակիչ 22-ամյա Մնացական Ալեքսանյանը բերման է ենթարկվել Շիրակի մարզի Մարալիկի քննչական բաժին: Նրան ոստիկանություն էին հրավիրել Գյումրիում հունվարի 15-ի հավաքի ժամանակ տեղի ունեցած բախումների կապակցությամբ՝ առանց ծանուցագրի[47]: Դեպք 6. Փետրվարի 5-ին «Հիմնադիր խորհրդարանի» ասուլիս իրականացնելու նպատակով Հանրապետության Հրապարակում գտնվող Գևորգ Սաֆարյանը և Հայկ Գրիգորյանը բերման են ենթարկվել[48]:	
• բերման ենթարկված քաղաքացիներին սահմանված ժամկետից երկար ոստիկանության բաժանմունքում պահելը Դեպք 1. Հունվարի 15-ին Գյումրիում բերման ենթարկված Թեհմինե Ենոքյանին, Իգոր Մուրադյանին, Վարդան Հակոբյանին և Վարուժան Ավետիսյանին 5 ժամ և ավելի պահել են Գյումրիի Մուշ ոստիկանական բաժանմունքում[49]:	1
• ձերբակալություն Դեպք 1. Փետրվարի 4-ին Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղի բնակիչ 22-ամյա Մնացական Ալեքսանյանը ձերբակալվել է հունվարի 15-ին Գյումրիում տեղի ունեցած միջադեպերի առնչությամբ[50]:	1
• սահմանված ժամկետից երկար հարցաքննություն Դեպք 1. Լրագրող Լևոն Բարսեղյանի հաղորդմամբ հունվարի 17-ին Մնացական Ալեքսանյանին ոստիկանությունում 13 ժամ շարունակ հարցաքննության են	1

[45] ՀՀ փոխոստիկանապետը՝ Գյումրիում ոստիկանական լրացուցիչ ուժեր մտցնելու, բերման ենթարկված անձանց ու վիրավորների մասին, http://www.aravot.am/2015/01/16/532994/

[46] Միջադեպի ժամանակ տուժել է 33 քաղաքացի, որոնցից 23-ը ոստիկան, հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով և 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ խուլիգանություն և իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը: Մեղադրանք է առաջադրվել Մնացական Ալեքսանյանի, Անուշավան Հարությունյանի և անչափահաս Սամվել Սարգսյանի նկատմամբ: Մեղադրյալների ընդհանուր թիվը պաշտոնապես չի հայտարարվել, սակայն Մնացական Ալեքսանյանի փաստաբան Հայկ Հարությունյանի հաղորդմամբ նրանց թիվը 19-ն է:
Գյումրիի բախումների գործով մեղադրյալները «խոպան գնացողներ» են. Լևոն Բարսեղյան, http://news.am/arm/news/259483.html

[47] Գյումրու դեպքերի առնչությամբ 22-ամյա քաղաքացի է ձերբակալվել, http://www.azatutyun.am/content/article/26830375.html

[48] Գեւորգ Սաֆարյանը հերքեց, որ ոստիկանները բերման ենթարկելիս իրեն հարվածել են, http://news.am/arm/news/251206.html

[49] «Գալիս ե՞ք, թե տանենք ձեզ», http://www.lragir.am/index/arm/0/right/view/109128

[50] Տե՛ս 33

ենթարկել[51]:	
Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում (ներառյալ հոգեբանական ճնշումներից, սպառնալիքներից զերծ մնալու իրավունքի խախտումը)	**4**
• լեզվակռիվ Դեպք 1. Հունվարի 14-ի երթի ժամանակ ՌԴ հյուպատոսության մոտ է գնացել Գյումրիի ոստիկանապետ Վարդան Նաղարյանը ու լեզվակռվի է բռնվել ակցիայի մասնակիցների հետ[52]:	1
• հայհոյանք Դեպք 1. Ոստիկանության աշխատակիցները հունվարի 15-ին ՀՀ գլխավոր դատախազության մոտ իրականացվող ակցիայի մասնակիցներից Արգիշտի Կիվիրյանին և մեկ այլ ակտիվիստի բերման ենթարկելիս հայհոյել են[53]: Դեպք 2. Հունվարի 15-ին Ռուսաստանի դեսպանատան առջև ոստիկաններից մեկը սկսեց հայհոյանքների տարափ տեղալ ցուցարարների հասցեին[54]:	2
• սպառնալիք Դեպք 1. Հիմնադիր խորհրդարանի անդամ Գևորգ Սաֆարյանը հայտարարել է, որ փետրվարի 5-ին իրեն բերման ենթարկելիս ոստիկանը բռունցքները մոտեցրել է իր դեմքին և սպառնացել է[55]:	1
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտում	**3**
• անգործություն (հանցագործության բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների չձեռնարկում) Դեպք 1. Հունվարի 3-ին «Հիմնադիր խորհրդարանի»՝ դեպի Լեռնային Ղարաբաղ մեկնող ավտոերթի մասնակիցների վրա Բերձորի մոտ ոստիկանական մեքենաներով անհայտ անձինք են հարձակվել, ծեծի են ենթարկել նրանց, ջարդել մեքենաների ապակիները, պոկել դրոշները: ՀՀ ոստիկանությունը գործի քննություն չի կատարել և նրան համապատասխան ընթացք չի տվել[56]:	1
• ավտոերթի մասնակիցներին անվտանգության բավարար երաշխիքների չտրամադրում	1

[51] Գյումրիում ձերբակալված երիտասարդին արձանագրությունները չեն տրամադրել. փաստաբան, http://www.epress.am/2015/02/05/262211.html

[52] Գյումրեցիները գրոհեցին ռուսական ռազմաբազան, http://www.armtimes.com/hy/read/58249

[53] ՀՀ գլխավոր դատախազության մոտից բերման են ենթարկել Արգիշտի Կիվիրյանին, http://news.am/arm/news/247925.html

[54] Մի ոստիկանը գետնին նետեց հայկական դրոշը, մյուսը հայհոյեց ցուցարարին, http://www.aravot.am/2015/01/15/532525/

[55] Գեւորգ Սաֆարյան. «Ոստիկանները իրենց լակոտի նման են պահում», http://www.aravot.am/2015/02/05/539238/

[56] Բերձորում հանցագործություն է կատարվել, http://civilnet.am/2015/02/03/interview-nikolay-baghdasaryan-police-violence/#.VNnmXfmsUe0

Դեպք 1. Մարտի 7-ին «100-ամյակն առանց ռեժիմի» շարժումը Գյումրիում նախատեսել էր ավտոերթ իրականացնել: Սակայն ավտոերթի մասնակիցները ոստիկանությունից անվտանգության բավարար երաշխիքներ չստացան և Գյումրիի մատույցների մոտից հետ դարձան[57]:	
• ձերբակալված անձին քննչական գործողությունների արդյունքների չտրամադրում Դեպք 1. Փետրվարի 4-ին ձերբակալված Մնացական Ալեքսանյանին չեն տրամադրել իր նկատմամբ կատարված քննչական գործողությունների արձանագրությունները[58]:	1
Լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեություն իրականացնելու իրավունքի խախտում	**1**
• լրագրողի մասնագիտական աշխատանքի խոչընդոտում Դեպք 1. Հունվարի 15-ին՝ Գյումրիից Երևան վերադառնալիս լրագրող Թեհիմե Ենոքյանին և ևս մի քանի ակտիվիստի բերման ենթարկելիս լրագրողին արգելում էին նկարահանել[59]:	1
Ֆիզիկական բռնություններից զերծ մնալու իրավունքի խախտում	**1**
• բռունցքներով հարվածների ենթարկում Դեպք 1. Հունվարի 15-ին Ռուսաստանի դեսպանատան առջև ոստիկանների և ակտիվիստների միջև բախումներ սկսեցին, որոնց ժամանակ մի ոստիկան բռունցքներով հարվածներ էր հասցնում ցուցարարներից մեկին[60]:	1
Կյանքի իրավունքի խախտում, Անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտում	**1**
• անգործություն (հավաքի բնականոն ընթացքի չապահովում) Մարտի 28-ին Գյումրիում Հիմնադիր Խորհրդարանը կազմակերպել էր հանրահավաք, որի ընթացքում հերթապահություն իրականացնող ոստիկանների ներկայությամբ մի խումբ անձանց կողմից հանրահավաքի մասնակիցների ուղղությամբ ձվեր են նետվել, ապա դանակահարվել է Հիմնադիր Խորհրդարանի	1

[57] «Հիմնադիր խորհրդարանը» Գյումրի չգնաց՝ զգուշանալով «հնարավոր սադրանքներից», http://www.azatutyun.am/content/article/26887192.html

[58] Գյումրիում ձերբակալված երիտասարդին արձանագրությունները չեն տրամադրել. փաստաբան, http://civilnet.am/2015/02/05/berdzor-yerevan-cars-police-protest/#.VNS-XJ2sUe1

[59] «Գալիս է՞ք, թե տանենք ձեզ», http://www.lragir.am/index/arm/0/right/view/109128

[60] Մի ոստիկանը գետնին նետեց հայկական դրոշը, մյուսը հայհոյեց ցուցարարին, http://www.aravot.am/2015/01/15/532525/

անդամ Հրաչիկ Միրզոյանը[61]:	
Ընդամենը	**38**

[61] ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԻՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ, https://robananyan.wordpress.com/2015/03/28/%D5%B8%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B0%D6%80%D5%A1%D5%AA%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%AB%D6%80-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1/

Լրացուցիչ աղյուսակներ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման անհատական դեպքերի մասին տվյալների վերաբերյալ աղյուսակներ

Աղյուսակ 1

Ոստիկանության ծառայողի անուն, պաշտոն	Դեպքերի քանակը
Անհայտ	16
Մադաթյան	1
քաղաքացիական հագուստով ոստիկաններ	1
Ընդամենը	**18**

Աղյուսակ 2

Ոստիկանության տարածքային վարչություն, բաժին, բաժանմունք, ստորաբաժանում	Դեպքերի քանակը
Անհայտ	9
Արմավիրի մարզային վարչություն, Արմավիրի բաժին	2
Արմավիրի մարզային վարչություն, Մեծամորի բաժին	1
Ոստիկանության կենտրոնական բաժին, Անձնագրային ծառայություն	1
Երևան քաղաքի վարչություն, Մաշտոցի բաժին	1
Երևան քաղաքի վարչություն, Արաբկիրի բաժին	1
Երևան քաղաքի վարչություն	2
Տավուշի մարզային վարչություն, Իջևանի բաժին	1
Ընդամենը	**18**

Աղյուսակ 3

Ոստիկանության գործողության / անգործության օբյեկտ	Դեպքերի քանակը
Ակտիվիստներ	1
ԲՀԿ-ի անդամների	4
զոհված զինվորների ծնողներ	1
լրագրող	1
ՀԿ	1
ոչ ակտիվիստներ	10
Ընդամենը	**18**

Հավաքների ժամանակ ոստիկանության կողմից մարդու իրավունքի խախտման դեպքերի մասին տվյալների աղյուսակներ

Աղյուսակ 1

Դեպքի տեսակ	Դեպքերի քանակը
ավտոերթ	**3**
բացօթյա ասուլիս	**3**
հավաք	**30**
Հացադուլ	**1**
մոմավառություն	**1**
Ընդամենը	**38**

Աղյուսակ 2

Ոստիկանության ծառայողի անուն, պաշտոն	Դեպքերի քանակը
Անհայտ	30
Արաբկիրի բաժնի պետի տեղակալ Գագիկ Հակոբյան	1
Գյումրիի ոստիկանապետ Վարդան Նաղարյան	1
Երեւանի ոստիկանապետ Աշոտ Կարապետյան, փոխոստիկանապետ Վալերի Օսիպյան	1
Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյան	2
Հայաստանի փոխոստիկանապետ Սամվել Հովհաննիսյան	1
Փոխգնդապետ Կարեն Մովսիսյան, քաղաքացիական հագուստով անձինք	1
Փոխոստիկանապետ, ոստիկանական զորքերի հրամանատար Լևոն Երանոսյան	1
Ընդամենը	**38**

Աղյուսակ 3

Ոստիկանության տարածքային վարչություն, բաժին, բաժանմունք, ստորաբաժանում	Դեպքերի քանակը
Անհայտ	8
Երևան քաղաքի վարչություն	12
Երևան քաղաքի վարչություն, Արաբկիրի բաժին	1
Երևան քաղաքի վարչություն, կարմիրբերետավորներ	5
Շիրակի մարզային վարչություն	8
Շիրակի մարզային վարչություն, Գյումրի քաղաքի ոստիկանության Մուշի բաժին	2

Շիրակի մարզային վարչություն, Գյումրի քաղաքի ոստիկանություն	1
Ոստիկանության զորքեր	1
Ընդամենը	**38**

Աղյուսակ 4

Ոստիկանության գործողության / անգործության օբյեկտ	
ակտիվիստներ	8
ակտիվիստներ, այլ ցուցարարներ	4
ակտիվիստներ, իրավապաշտպան, փաստաբան, այլ ցուցարարներ	1
ակտիվիստներ, լրագրող	1
ակտիվիստներ, լրագրող, քաղաքագետ	1
ակտիվիստներ, լրագրող, քաղաքագետ, այլ ցուցարարներ	1
ակտիվիստներ, լրագրողներ, իրավապաշտպաններ, մշակույթի գործիչներ, այլ ցուցարարներ	1
լրագրող	1
հացադուլավորներ	1
ցուցարարներ	19
Ընդամենը	**38**